

ԳԻՅԵՐ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

Գրեց՝ Յ. ձ. ՍԻՐՈՒՆԻ

ՆԱՍՈՒՑԱՆ

Երուանդ Օտեան իր ապրած ատեն բախտաւոր եղաւ: Ան չմեռած ալ յարգանքը ճանչցաւ: Ան իր հետը ունեցաւ ամբողին ու հասկըցողը: Հաւասարապէս զինքը սիրեցին մտքի մարդիկն ու ռամիկները: Ան իր խօսքը ըսաւ ամենուն, անոնց, որ թուղթով կը կշտանան, եւ անոնց, որ գրերուն ետին բան մը կը փնտռեն:

Հիմա հողին տակն է ան ալ:

Մէկը չի գիտեր, թէ որքան պիտի ապրի անիկա վաղը: Որքան ուժ պիտի ունենան աշխարհքի մէջ իր ձգած բաները, եւ որքան պիտի կռուի իր յիշատակը ճճիներուն հետ:

Օտեանի վրայ քիչ բան գրուեցաւ մեռնելէն վերջը: Օտար ակունքներու վրայ ցիրուցան նետուած ժողովուրդէ մը ու իր մտաւորականութենէն չի սպասուիր անշուշտ մեռնողի մը դադարին շուրջը ժողովուրի, ու անոր վրայ քար մը դնել: Օրուան խաժամութիւն մէջ կորսուեցաւ Օտեանն ալ: Երբակի ազէտը նոյնիսկ կէս ձգեց իր վրայ շերիմ մը գետեղելու ձեռնարկը:

Քանի մը կենսագրական նօթեր, մէկ քանի արխիւոյ դամբանական միայն լուեցաւ մարդու մը ետեւէն, որ մօտ քառասուն տարի գրելի շարժեց հայ կեանքի մէջ, գիղելով հատոր հատորի վրայ, ու հազարաւոր էջեր ցանելով թերթերու եւ պարբերականներու մէջ, եւ որ եթէ շատ տուաւ հովան նետուելիք երկեր՝ սուաւ գլուխ-գործոցներ ալ: Տասնեակ մը յօդուածէ անգին չանցաւ իրեն ընծայուած դամբանականներուն թիւը. եւ սակայն անոնցմէ ոչ մէկը Օտեանի տեղը գտաւ մեր գրականութեան մէջ: Ամէնքը հաւանելիք զիծ մը գտան Օտեանի մէջ, ու իրենց նախասիրած երկերը՝ անոր ստուար գործերուն մէջէն:

ՄԵՌՆԵԼԷՆ ԱՌԱՋ

Օտեանը մօտէն ճանչցայ: Դիպուածը բերաւ, որ իր կեանքին վերջին տարիներէն եր-

կուքը միասին անցընեմ, գրեթէ զիշեր-ցորեկ: Ճիշդ է, երկու տարին բան մը չէ ամբողջ կեանք մը ըմբռնելու համար. բայց բաւական է գրողի մը հողիին թափանցելու եւ այդ լոյսով անոր երկը դատելու համար:

1922-ի աշնան էր, որ գիրար գտանք Պուքընէի մէջ: Եւրոպայէն Պոլիս դարձիս կանգ առած Պուքընէ, Օտեանը զիս հոս կը գտնէր Պոլսէն փախելով: Ու ամբողջ երկու տարի միասին եղանք, կամ աւելի ճիշդը ան մեր ընտանիքին մէկ անդամը եղաւ՝ մինչեւ հոսկէ Սիւրիա անցնելը: Ու անկարելի է մէկու մը հետ երկու տարի միասին ըլլալ, ուրախութեան ու վշտի մէջ, զինովութեան թէ հիւանդութեան ատեն, փողոցն ու տունը թէ պտոյտի ժամանակ, ու զանիկա չճանչնալ:

Ատոր համար է որ կ'ըսեմ թէ Օտեանը մօտէն ճանչցայ: Ճանչցայ կ'ըսեմ՝ որովհետեւ քիչ մըն ալ փորձեցի զինքը ճանչնալ: Տեսակ մը սեւ նախագագում ինծի կ'ըսէր, թէ շուտով հողին պիտի յանձնենք զանիկա, եւ փորձեցի իր հողին խուզարկել: Իր տրամադէր եղած վայրկեանները կ'որոսայի, խօսեցնելու համար զինքը մտերմօրէն, իր կեանքին ու գրական երկին վրայ: Ինքն ալ կը նախագար կարծես իր մահը, ու թոյլ կուտար հարցուփորձելու զինքը: Ըսի իրեն, թէ մօտաւոր ուսումնասիրութեան մը համար են արձանագրած նօթերս: Ժպտեցաւ ախուր մը: Բայց իր ժպիտին մէջ զգալի էր յուսահատ շող մը: Չհարցուց, թէ ի՞նչ ուսումնասիրութիւն էր պատրաստելիքս, բայց կը զգար կարծես թէ իր «հուսկ-բանքը» պիտի ըլլային իր խօսածները, տեսակ մը կտակ՝ իր կեանքը բացատրելու համար յաջորդ սերունդին:

Պէտք է ըսել, որ ես ալ մասնաւոր ջանք մը կ'ընէի զինքը լրիւ խօսեցնելու համար: Կ'ուզէի, որ իր կեանքին մասին պէտք եղածը ըսէ Սիւրիա չգացած: Կը կարծէի որ Սիւրիան իր գերեզմանը պիտի ըլլար, որովհետեւ մեզմէ բաժնուելէ յետոյ դարձեալ պիտի սկսէր հող